խին, ուրուանեսիլ, նշաչք, աղջիկ էր անցնում, եւ իր յօնքերի կամարների վրայ հորիզոնը պարում էր: Զտեսնուած լճերի ափին, լուսնի լոյսով, զիւղացիները գոյնզգոյն ըզդեստներ հագած, բախտաւոր եւ ուրախ, ձեռք ձեռքի տուած, դարձպար էին դառնում: Եւ մըշուշների միջից տեսիլքները, աժան, շուկայի մէջ ծախուող դիմակներով, բիչ բիչ նայում էին Բուխարայի վառ մետաքսներով շրջապատուած:

— Գնացի աշխատելու, ասում է Ս–ն, բան դուրս չեկաւ: Կոնդի կատարին, ժամերով նըստեցի, չեմ հասկանում...չի լինում էլի...

Պատմում եմ:

— Մի օր, սիրելի բարեկամ, Ֆիօրենցիայից Ասիզի տանող ճանապարհի վրայ, ես տեսայ չքնաղ մի Մադոննա: Նրան նկարել էր անյայտ մի նկարիչ, փոքրիկ մատուռի դրան վերը՝ երիտասարդ եւ գեղեցիկ, թաւշեայ մեծ աչքերով, նազելի եւ բախտաւոր, որպէսզի յոգնած անցորդը տեսիլքի առջեւ զմայլի եւ ուրախ ազօթքով, դալար դաշտերը եզրող ճանապարհը շարունակի:

Գեղեցիկ էր Մադոննան: Նրա կամարաձեւ յօնքերից, նրա խորաթափանց աչքերից, դէմքի կանոնաւոր գծերից, լոյս էր իջնում եւ հին գինու նման ամբողջ էութիւնս վառում:

Եւ որովհետեւ բախտաւոր տեսիլքները ապրում են մեզ հետ, մեր էութեան անբաժանելի մասը կազմելով, նրանք փոփոխութեան են ենթարկւում մեր հոգու հետ եւ մեր տեսողութեան առջեւ նորանոր ձեւեր առնում:

Այդպէս է, որ անցեալ օր, ես նրան տեսայ Սարտարապատի մօտ, նոր շինուող որբերի գիւղը տանող ճանապարհի վրայ կանգնած:

— Բա՛ն ասացիր...

— Թո՛յլ տուէք: Կրօնական սառնատան ներքնուղիները խոր են եւ լայն: Անդունդը դոց է, ճանապարհը անյայտ: Եթէ ուզես անցնել, Միջերկրական առասպելը աւազ կը տարածի առջեւդ: Կը գնաս մինակ, ու աւազի մէջ բարդ ծովերի խուլ կանչը կը լսես:

Եթէ հասնես լեռներին, կը հանդիպիս երկաթէ եօթ դուռներին, կիսաբաց: Մտի՛ր, եւ Կոյսը այնտեղ կանգնած է:

Մադոննան — դա փաստ է — որոշել է դեղածիծաղ բլուրները թողնել: Պարզապէս յոգնել է միշտ նոյն դաշտանկարի առջեւ, նոյն դերը խաղալ:

Մի օր, հեռուից, փղոսկրէ սրնգի ձայներ են լսում: Բլուրի կատարին հորիզոնը սկսում է շարժուել եւ տարօրինակ գոյների խաղը ծածկում է երկինքը: Բուստի հսկայ կտորներ, զմրուխտի ճառագայթներ, ատամի եւ ամեթիստ պայթում են օդի մէջ՝ անկարելի եւ հմայիչ ճարտարապետական ձեւեր առնելով: Ամէն ինչ երգում է եւ Մադոննան ճանապարհ է ընկնում: Աջ կողմից, Ասիզին եւ Պերուջեան թաւալւում են լայնատարած դաշտի մէջ, իսկ ձախ կողմից՝ Ֆիօրենցիան, հսկայ զանգակատան նման սկսում է զողանջել:

Ո՞վ կարող է ասել, թէ ի՞նչ միջոցների է դիմում հոգին տարածութիւնները անցնելու համար: Հովերը կանանչ անտառների նման խարշափում են, լեռները կապոյտ ձեռքերով ամպեր են ամբարում եւ նաւերի վրայ Ամերիկան գրկում է Եւրոպան եւ ականջին պողպատէ առասպել պատմում:

Շատ հաւանական է, որ Մադոննան ճամբորդած լինի Տարանտոյից մեկնող ռումանական ճերմակ նաւերից մէկի մէջ: Կապոյտ ծովի վրայ սպիտակ նաւ ու առաջի կարգի սենեակի մէջ, Մադոննան նստած մանիկիւրի էր ենթարկում իր եղունգները:

Կապիտանը պատում էր նրա շուրջը եւ ճաշի ժամանակ պատուոյ տեղ տալիս: Երկրորդ սպան գիշերը ման էր գալիս անհանգիստ, յուզուած եւ սիրահար: Նաւաստիները պատճառ էին փնտռում նրա սենեակի առջեւից ացնելու համար: Գիշերը, նաւը տարօրինակ կերպով լուսաւորուած էր: Ռադիօ հեռագրի պաշտօնեան, ապշած, աշխարհի չորս կողմից հըմայիչ երաժշտութիւններ էր լսում: Յունական կղզիները ծովի վրայ լողում էին, վարդագոյն բոցերի մէջ վառուած:

Պիրէոն չհասած, առաջի կապիտանը իրեն ծովը նետեց: Մի քիչ յետոյ, երկրորդ սպան, Բրաւունինգի հարուածով իր ուղեղը օդը հանեց: Դարդանելից 144 մղոն հեռաւորութեան վրայ, քիչ նաւաստի էին մնացել, խոհարարը խմել էր բոլոր կոկտէյլները եւ երկար դանակները ձեռքին, կատաղած, կայմերն էր կտրում:

Սակայն, նաւը առաջանում էր անդեկ:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան